



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
 MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA
FIRST DEPUTY MINISTER
 МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ПЕРВЫЙ ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

0010, ք. Երևան, Հանրապետության հր., Կառավարական 3-րդ ստան,
 3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia
 0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3
 էլ.փոստ/Е-mail/ эл.почта :
 Web page: www.mnp.am rapyan@mnp.am
 ☎ (374 11) 818 518
 ☎ (374 11) 818 506

№ 2/02.1/20106
 «01» «02» 2017 թ.

<<Համահայկական բնապահպանական ճակատ>>
 քաղաքացիական նախաձեռնության անդամ
 պարոն Լ. Գալստյանին
 էլ. հասցե՝ armecofront@gmail.com

Հարգելի պարոն Գալստյան

Ի պատասխան 2016 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՀ վարչապետին ուղղված Ձեր դիմում-հարցմանը ներկայացնում եմ Ամուլսարի ոսկու հանքավայրի հետ կապված բարձրացված հարցադրումների վերաբերյալ պատասխանը:

Առդիր՝ 4 թերթ:

Հարգանքով՝



Ս. Պապյան

Վ. Ավետիսյան
 011818591



Պատասխան
Ամուլսարի ոսկու հանքավայրի հետ կապված բարձրացված հարցադրումների
վերաբերյալ

1-ին և 2-րդ հարցերի վերաբերյալ.

Որոտան-Արփա ջրատարը շահագործման է հանձնվել 2004 թվականին, գտնվում է տեխնիկապես բավարար վիճակում և պատրաստ է շահագործման:

3-րդ հարցի վերաբերյալ.

Համաձայն ներկայացված նախագծի տարրավազման հարթակն և ԴԱԼ (դատարկ ապարների լցակույտ)-ը ունենալու է կոմպոզիտային միջադիր համակարգ, որը բաղկացած է լինելու ՑԽՊԷ գեոթաղանթային միջնաշերտից, որի տակ տեղադրվելու է 0,3 մ նվազագույն հաստության սեղմված թույլ ջրաթափանց հողային միջնաշերտ կամ մեծ թեքության պայմաններում՝ գեոսինթետիկ կավային միջնաշերտ (ԳԿՄ):

Նախագծով ամրագրված է, որ բոլոր կոնտակտային ջրերը, բացահանքից և դատարկ ապարների լցակույտի հարթակից հոսքերը, լուծույթների արտահոսքերը բնական միջավայր բացառելու նպատակով դրանք կհավաքվեն կույտային տարրավազման հարթակի տակ և մերձակայքում նախատեսվող ավազաններում և կտրվեն շրջանառու ջրային համակարգ, տես 5.6.6 ենթազրույթ:

Շահագործման 5-րդ տարուց սկսած ավելցուկային կոնտակտային ջրերը կմաքրվեն կենսաբանական մաքրման համակարգում

[/http://www.lydianarmenia.am/resources/geoteam/pdf/d62952239edb9e2120b205798f7a45a7.pdf /:](http://www.lydianarmenia.am/resources/geoteam/pdf/d62952239edb9e2120b205798f7a45a7.pdf)

Բացահանքում առաջացող ջրերի ինֆիլտրացիան և հետագա հոսքը ստորգետնյա ջրեր կանխելու նպատակով ջրերը պոմպով մղվելու են շրջանառու համակարգ: Պոմպով մղումից հետո ինֆիլտրացիայի ենթարկվող ջրերի քիչ մնացորդային քանակները ստորգետնյա ջրերի որակի վրա ազդեցություն չեն ունենա: Ընդհանուր առմամբ դատարկ ապարների 154 նմուշ Տիգրանես/Արտավազդես բացահանքի տարածքից և 80 նմուշ էրատո բացահանքի տարածքից ուղարկվել է թթվահիմնային հաշվառման և լաբորատոր փորձարկումներով ստացվել են հետևյալ արդյունքները:

- Դատարկ ապարները, որոնք կազմված են կոլլոիդումից ունեն սուլֆիդների չափազանց ցածր պարունակություններ, քանի որ հողմահարման արդյունքում տեղի է ունեցել օքսիդացում: Ուստի տվյալ ապարները դասակարգվել են, որպես ոչ թթվազոյացնող (ՈԹԳ):
- Վերին հրաբխային լիթոլոգիա ունեցող դատարկ ապարները նույնպես դասակարգվել են, որպես ոչ թթվազոյացնող (ՈԹԳ):
- Ստորին հրաբխային լիթոլոգիա ունեցող դատարկ ապարներում սուլֆիդները ենթակա են օքսիդացման և ուստի դասակարգվում են որպես պոտենցիալ թթվազոյացնող ապարներ (ՊԹԳ)

Ծրագրի շահագործման ընթացքում նախատեսվում է, որ դատարկ ապարների 60% լինելու է ոչ թթվազոյացնող (ՈԹԳ) վերին հրաբխային և կոլլոիդիալ առաջացումներ (ՎՀԱ), իսկ 40%՝ ՊԹԳ ՍՀԱ:

Դատարկ ապարների լցակույտից ԴԱԼ հնարավոր արտահոսքերի ջրային ռեսուրսներ ներթափանցման կանխարգելման հարցերը քննարկված են 5.2 գլխում և հավելված 16:

Ըստ նախագծի կատարվել է 2000 ավել մակերեսային և ստորգետնյա ջրերի նմուշների անալիզ: Ընտրվել են այն պարամետրերը, որոնց կոնցենտրացիաները հանքի դրենաժում գերազանցել են ջրի որակի թույլատրելի նորմաները և ստանդարտները [/http://www.lydianarmeria.am/images/amulsar/14.pdf](http://www.lydianarmeria.am/images/amulsar/14.pdf),

<http://www.lydianarmeria.am/resources/geoteam/pdf/2ea3680d1e2c4c544777489f4b75ba1a.pdf/>:

Տիգրանես/Արտավազդեսի բացահանքի և Սպանդարյան/Կեչուտ թունելի միջև տարածությունը, ստորերկրյա ջրահոսքի ուղղությամբ, կազմում է 2890մ, իսկ նույն տարածությունը Էրատո բացահանքի և թունելի միջև կազմում է 2540մ:

Ընտրված պարամետրերի առավելագույն կոնցենտրացիաների, բացահանքերից թունել տարածությունների, հիդրավիկ գրադիենտի և ջրաթափանցելիության հիման վրա, Դարսիի կանոնով հաշվարկվել է բացահանքերից Սպանդարյան-Կեչուտ թունելի ուղղությամբ ստորերկրյա ջրերի տեղափոխման մոտավոր ժամանակը: Համաձայն իրականացված հաշվարկների Տիգրանես/Արտավազդես բացահանքից դեպի Սպանդարյան-Կեչուտ թունել տեղափոխման ժամանակը կազմում է մոտ 133 տարի, և Էրատո բացահանքից մինչև թունել մոտ 128 տարի (տես ՇՄԱԳ-ին կից հավելված 21):

Ընկերությունը մշակել է թթվային ապարների դրենաժի կառավարման պլան, որով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները:

- Տիգրանես/Արտավազդես բացահանքի դատարկ ապարները մեկուսացվելու (կապսուլավորվելու են) դատարկ ապարների լցակույտում:
- Տիգրանես/Արտավազդես բացահանքի պատերը ունեն թթվագոյացնող պոտենցիալ և ուստի շահագործման ընթացքում բացահանքում առաջացող ջրերը արտամղվելու են պոմպերով բացահանքից և Սևանի անմիջական ազդեցության գոտուց դուրս: Փակման ընթացքում բացահանքը լցվելու է Էրատո բացահանքի դատարկ ապարներով, այնուհետև պատվելու է կավային շերտով և կանաչապատվելու է:
- Էրատո բացահանքի ՊԹԳ դատարկ ապարները նույնպես մեկուսացվելու (կապսուլավորվելու են ոչ-թթվագոյացնող ապարներով՝ դատարկ ապարների լցակույտում, Տիգրանես/Արտավազդես բացահանքի հետլցման ընթացքում:
- Էրատո բացահանքում նույնպես շահագործման ընթացքում առաջացող ջրերը պոմպերով արտամղվելու են բացահանքից և Սևանի անմիջական ազդեցության գոտուց դուրս և օգտագործվելու են հանքավայրի շահագործման այլ գործընթացներում: Փակման ընթացքում բացահանքը հետլցվելու է դատարկ ապարներով մինչև ծածկվի բացահանքի պատերի այն հատվածները, որոնք թթվագոյացնող են՝ մոտ 30 մետր՝ տես Հանքի փակման ծրագիր՝ http://www.lydianarmeria.am/images/2016/cccl_2016.pdf:

Նախատեսվում է նաև, որ փակման գործընթացի ավարտից հետո առնվազն 5 տարի ընկերության կողմից կիրականացվի վերականգնված բուսականության և ջրի որակի ցուցանիշների վերահսկողություն:

4-րդ հարցի վերաբերյալ.

Օգտակար հանածոյի արդյունահանման իրավունքի հայցման, օգտակար հանածոյի հանքավայրի շահագործման և օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքի տեղամասից հրաժարման ժամանակ բարձրացված խնդիրները կարգավորված են ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով, 58-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ ՀՀ օրենքի 7-րդ, 8-րդ, 12-րդ, գլուխ 5.1-ի 60.4, 60.5 հոդվածներով, ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N1079-Ն և ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի N22-Ն որոշումներով: Եթե ընդերքօգտագործողն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չի կատարում նախագծով կամ ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված բնապահպանական (այդ թվում՝ ռեկուլտիվացիոն) աշխատանքներն, ապա ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ հոդվածների համաձայն, լիազոր մարմինը գրավոր ծանուցման միջոցով ընդերքօգտագործողից պահանջում է իր սահմանած ժամկետում իրականացնել նշված միջոցառումները: Նշված պահանջը չկատարվելու դեպքում լիազոր մարմինը սեփական նախաձեռնությամբ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի միջոցների հաշվին ձեռնարկում է նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները՝ այդ մասին նախապես ծանուցելով ընդերքօգտագործողին:

Հայտնում եմ նաև, որ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի և օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների վճարների չափը ներկայացված են Ամուսարի հանքի փակման ծրագրում (էջ 69), իսկ ֆինանսական երաշխիքներն ապահովված են պայմանագրին կից հավելվածում, որտեղ ներկայացված են այդ գումարների վճարների իրականացման ժամանակացույցը:

5-րդ հարցի վերաբերյալ.

Թթվային ապարների դրենաժի հետ կապված խնդիրները, ոփսկերը և դրանց կառավարումը ներկայացված է ՇՄԱԳ հաշվետվության մեջ ՀՀ 2.4. Երկրաբանություն, սեյսմիկություն, թթվային ապարների դրենաժ և ինժեներա-երկրաբանական տարրեր» և ՀՀ 2.4.3. Թթվային ապարների դրենաժի բնութագրում» բաժիններում և հաշվետվությունում:

Հանքի բոլոր կոնտակտային ջրերը կուտակվելու և օգտագործվելու են Ծրագրի համար նվազագույն բեռնաթափման շահագործման պլանի համաձայն: Այդ ջրերի վերջնական բեռնաթափումը կկատարվի կոյտային տարրավազման մոտ գտնվող կուտակման ավազաններում: Կոնտակտային ջրերի լիարժեք օգտագործումը հանքշահագործման ժամանակ կնվազեցնի Ծրագրի ջրօգտագործման պահանջները:

Աշխատանքային ծրագրի նախնական փուլում իրականացվել է մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մանրամասն

ուսումնասիրություն և հետազոտություն, այդ թվում դիտակետային հորատանցքերի հորատման իրականացմամբ, որոնց հիման վրա նախագծով նախատեսվել են ջրային ռեսուրսների պահպանության բնապահպանական մի շարք միջոցառումներ: Նախագծով նախատեսված է նաև ջրային ռեսուրսների մանրամասն մշտադիտարկումների իրականացման ծրագիր:

Տարրավազման հարթակն ունենալու է կոմպոզիտային միջադիր համակարգ, որը բաղկացած է լինելու գեոթաղանթային միջնաշերտից, որի տակ տեղադրվելու է 0,3 մ նվազագույն հաստության սեղմված թույլ ջրաթափանց կավային միջնաշերտ կամ մեծ թեքության պայմաններում՝ գետսինթետիկ կավային միջնաշերտ: Դատարկ ապարների լցակույտը նույնպես կազմված է միջադիր համակարգից՝ գետսինթետիկ կավային միջնաշերտ: Դատարկ ապարների լցակույտի շահագործման հինգերորդ տարում ակնկալվող ավելցուկային կոնտակտային ջրերը կցամաքեցվեն կենսաբանական մաքրման համակարգով: Շահագործման, փակման և հետփակման փուլերում առաջացած բոլոր կոնտակտային ջրերը Համաշխարհային Բանկի Խմբի ՄՖԿ ԲԱԱ նորմերի և ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N75-Ն որոշման համաձայն անցնելու են համապատասխան կենսաբանական մաքրում՝ նախքան բեռնաթափվելը:

Ընդերքի պահպանության միջոցառումների ֆինանսավորումը կարգավորվում է ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 68-րդ հոդվածով:

Հայտնում են նաև, որ Ամուլսարի ոսկու հանքավայրի ծրագրին տրվել է տեխնիկական անվտանգության փորձաքննական եզրակացություն:

6-րդ հարցի վերաբերյալ.

Կարգավորվում է ՀՀ գործող օրենսդրությամբ: